Չեմ Օեցդեմիր (ԴԱՇԻՆՔ 90/ԿԱՆԱՉՆԵՐ):

Պարոն նախագահ, սիրելի գործընկերներ, Ձերդ գերազանցություններ և գերաշնորհ սրբազան հայրեր,

արամեացիների, ասորիների, հայերի, խալդերի, Պոնտոսի հույների և ի դեպ նաև թուրք քաղաքացիական հասարակության բազում ներկայացուցիչներ են այսօր նստած այցելուների օթյակներում: Սրտանց ողջունում ենք բոլորիդ:

(ծափահարություններ)

Երբեք պահը հարմար չէ խոսել այնպիսի աներևակայելի դաժան թեմայի շուրջ, ինչպիսին է ցեղասպանությունը: Երկար ձգձգելուց հետո այսօր քվեարկության է ներկայացվում մի բանաձև, որը խոսում է ցեղասպանության մասին, հստակ անվանում գերմանական մեղսակցությունը և սահմանում, որ հենց Գերմանիան է պարտավորություն կրում՝ միջնորդել Թուրքիայի և Հայաստանի փոխհարաբերությունների կարգավորման և մերձեցման գործընթացին:

(ծափահարություններ ԴԱՇԻՆՔ 90/ԿԱՆԱՉՆԵՐ –ի, ինչպես նաև ՔԴՄ /ՔՍՄ և ՍԴԿ –ի պատգամավորների կողմից)

Նախ ուզում եմ հնարավորությունն օգտագործել և շնորհակալություն հայտնել կոալիցիային՝ ընդհանրական բանաձևի հետ կապված իր խոստումը կատարելու համար: Շնորհակալական խոսքս եմ ուղղում նաև եկեղեցիներին՝ իրենց աջակցության համար, մեր երկրի նախագահին ու Բունդեսթագի նախագահին՝ իրենց հստակ խոսքերի համար: Առանց նրանց՝ նման ընդհանրական բանաձև այսօր չէր լինի:

Մեր թուրք բարեկամներին կասեի հետևյալը. խոսքը որևէ մեկին ցուցամատ պարզելու մասին չէ, մեր նպատակը մեզ բարոյական գերազանցություն վերագրելը չէ: Այս բանաձևը չենք ներկայացրել հանուն նրա, որ բարոյապես մեզ բարձր ենք դասում ու ուզում ենք խառնվել ուրիշների գործերին, այլ հանուն նրա, որ անդրադառնում ենք գերմանական պատմության մի հատվածին: Թույլ տվեք մեջբերում անել: Գերմանական ռայխի կանցլեր Բեթման Հոլվեգն ասել է.

„Մեր միակ նպատակն է Թուրքիային ամբողջ պատերազմի ընթացքում պահել մեր կողմում, անկախ այն բանից, հայերը կկործանվեն, թե ոչ:”

1918թ.-ին Կոստանդնուպոլսում գերմանական դեսպանության քարոզիչ քահանա Գրաֆ ֆոն Լյութիխաուն հետևանքների մասին զեկուցել է Բեռլին.

„Արևելյան մարզերում, բացառությամբ Կոստանդնուպոլսի և Զմյուռնիայի, ինչպես նաև արևմտյան Թուրքիայի այլ մարզերի, ամբողջ բնակչության 80-90%, իսկ տղամարդկանց 98%-ը այլևս կենդանի չէ...

Իսկ ինչը վերաբերվում է հոգևորականներին, ապա նրանք լիովին ոչնչացված են”:

Հենց սրա համար էլ մենք կրում ենք պատմական պարտավորություն՝ որպես բարեկամ խրախուսել հայերին և թուրքերին՝ հաշտվել միմյանց հետ:

(ծափահարություններ ամբողջ դահլիճում)

Հայացքս ուղղելով Գերմանիայում ապրող հայերին՝ ասում եմ. սա միանշանակ նաև գերմանահայությանն է վերաբերում:

Հարգելի գործընկերներ, եթե անցյալում այս սարսափելի հանցագործությանը մասնակից ենք դարձել, չի նշանակում, թե ներկայում էլ պիտի միանանք ժխտողներին: Շոայի վերաարժեվորումը մեր ժողովրդավարական Գերմանիայի հիմքն է: Դրա համար էլ ժամանակն է առերեսվել Գերմանիայի Դաշնային Հանրապետությանը նախորդող գերմանական պետությունների իրականացրած այլ հանցագործություններին: Այստեղ պետք է նշեմ Հերերո և Նամա ցեղախմբերի նկատմամբ գործած ցեղասպանությունը: Նաև այս ցեղասպանությունն էլ է սպասում իր ճանաչմանը:

(ծափահարություններ ԴԱՇԻՆՔ 90/ԿԱՆԱՉՆԵՐ –ի, ՍԴԿ –ի, ՁԱԽԵՐ-ի, ինչպես նաև ՔԴՄ /ՔՍՄ-ի պատգամավորների կողմից)

Երբ Քյոթահիայի նահանգապետը 1915թ. իր վարչատարածքի հայազգի բնակիչներին վտարելու հրամանը ստացավ, հրապարակավ հայտարարեց, որ չի ենթարկվելու այդ հրամանին: Կոնիայի քաղաքապետը, Կոնիայի Մելվեվի-Դերվիշ միաբանության համախոհները նույն կերպ վարվեցին: Նրանք ենթարկվեցին իրենց սրտի ձայնին: Նրանց մարդկային կողմնացույցը չխափանվեց: Շատերին մահմեդական հավատը կամ մարդկային կերպարն էր, որ թույլ չտվեց ենթարկվել Ստամբուլից եկած այդ ստոր հրամանին: Նրանց և Թուրքիայի բոլոր այն խիզախ, հրամանը չիրականացրած հերոսների առջև հարգանքով խոնարհվում ենք:

(ծափահարություններ ամբողջ դահլիճում)

Ոչ թե մարդասպան Թալեաթ և Էնվեր փաշաներով, այլ հենց այս թուրք շինդլերներով պետք է հպարտանան ոչ միայն Թուրքիայում ապրող, այլ նաև Գերմանիայում բնակվող թուրքերը:

Ցեղասպանության ճանաչմամբ, գերմանական համապատասխանատվության ընդունմամբ և վերաարժեվորման գործընթացի խթանմամբ ուզում ենք հատկապես գերմանաբնակ թուրքազգի քաղաքացիներին հնարավորություն տալ՝ գտնել այն բոլոր հարցերի պատասխանները, որոնք չեն գտնի Թուրքիայի պատմության գրքերում: Ես գիտեմ՝ ինչի մասին եմ խոսում: Ինչպես անցյալ տարի Գերմանիայի մեր նախագահն է իր ելույթում հստակեցրել՝ այսօրվա ապրողները մեղավոր չեն (ի դեպ, նույնը մեզ է վերաբերվում Շոայի հետ կապված), բայց պատասխանատվություն են կրում: Թուրքիայի նման նաև մենք՝ գերմանացիներս ենք կրում այդ պատասխանատվությունը:

(ծափահարություններ ամբողջ դահլիճում)

Մենք չենք խարանում որևէ մեկին: Ընդհակառակը. ուզում ենք նրանց խրախուսել, հարցեր տալ: Առիթից օգտվելով՝ ուզում եմ հիշատակել նաև Բալկաններից վտարված մահմեդականների ապրած ցավը, հիշել չերքեզների՝ այդ թվում նաև հորս նախնիների հալածանքները: Այն, ինչը նրանց հետ է կատարվել, որոշ փորձագետներ ասում են՝ դա էլ է ցեղասպանություն: Նրանց պատմություններն էլ են սպասում, որ պատմվեն, որպեսզի ապագա սերունդներին Թուրքիայի պատմության ճիշտ պատկերը փոխանցվի, որ այն սև ու սպիտակ չէ, այլ՝ գունավոր ու համապարփակ:

Այսօր էլ, նայելով տարածաշրջանին, տեսնում ենք, որ քրիստոնիաներին կրկին հետապնդում են Իրաքում, Սիրիայում, նաև Թուրքիայում: Այն վայրերը, որտեղ հանգրվանել են բռնագաղթի ճանապարհին կենդանի մնացած հայերը, հայտնվել

են Սիրիայի պատերազմի գոտում, օրինակ՝ Հալեպը, Դեր Զորը: Մինչդեռ մենք այստեղ տարիներ շարունակ ողջունում էինք Թուրքիայում եկեղեցիների վերանորոգման փաստը, այժմ լսում ենք, որ կրկին եկեղեցիներ են պետականացվում ու փակվում: Թուրքիայում քահանաները փաստացիորեն այլևս կրթություն չեն կարող ստանալ: Սակայն ամենադառն այն է, որ "այ հայ" միշտ էլ Թուրքիայում հայհոյանք է համարվել, այսօր՝ ավելի քան հայհոյանք: Ինձ էլ են ասում "այ հայ": Ինձ հայ անվանելը բնավ վիրավորական չեմ համարում:

Սուննի մահմեդական ընտանիքից սերելով՝ մտահոգությամբ եմ լցվում, երբ խորհում եմ Արևելքի քրիստոնյաների մասին: Քրիստոնյա համայնքները քրիստոնեության հենց ծննդավայրում գտնվում են բնաջնջման վտանգի ներքո:

"Եթե հայերն այսօր դեռ կենդանի լինեին, ապա Վան քաղաքը կլիներ արևելքի Փարիզը:" Այսպես էր ասում սպանված թուրքահայ ընկերս՝ Հրանտ Դինքը, լրագրող, որի չափ ոչ ոք այդքան ներդրում չի ունեցել Թուրքիայում հայ-թուրքական հաշտեցման գործում, և որի համար էլ վճարել է իր կյանքի գնով:

Շնորհակալ եմ Բունդեսթագի նախագահից այն խոսքերի համար, որ մեզ՝ պատգամավորներս չի կարելի սպառնալ իրենց կարծիքն արտահայտելու համար: Բայց , սիրելի՛ գործընկերներ, դժվարանում եմ խոսել այդ մասին, քանի որ գիտեմ, որ երբ դուրս գամ Բունդեսթագի շենքից, ինձ չեն ձերբակալի, որ ինձ ամենայն հավանականությամբ չեն զրկի անձեռնմխելիությունից, երբ տուն հասնեմ, որ ինձ ծեծի չեն ենթարկի կամ էլ չեն սպանի: Սակայն դա չի վերաբերում Թուրքիայի բոլոր մեր գործընկերներին, չի վերաբերում բոլոր նրանց, որոնք Թուրքիայում աշխատում են այդ հանցագործությունների վերանայման ուղղությամբ: Մեր զորակցությունն ենք հայտնում նրանց: Նրանք իսկապես վախենալու տեղ ունեն և բարձր գին են հատուցում:

Շնորհակալություն

(ծափահարություններ ամբողջ դահլիճում)

Թարգմանությունը՝ Գերմանական Բունդեսթագի